

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31**

ԴԻՏՈՐԴԻ ՁԵՌՆԱՐԿ

Սույն ձեռնարկը հրապարակվել է ի կատարումն Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի պահանջների: Այն կազմվել է Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից՝ Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքի և Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումների հիման վրա:

ԱՐԳԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ` ՀԱՄԱՌՈՑ

➤ **2020թ. մարտի 31-ը** Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից հայտարարվել է որպես Արցախի Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի հերթական ընտրությունների օր, ընդ որում` Ազգային ժողովի ընտրությունները` միայն համամասնական ընտրակարգով: 2 համապետական ընտրությունները համաժամանակյա անցկացնելու մասին դրույթը սահմանվել էր Արցախի Հանրապետության 2017թ. փետրվարի 20-ին ընդունված Սահմանադրությամբ:

➤ Սա 29 տարվա անկախություն ձեռք բերած Արցախի Հանրապետության **քվով 15-րդ** համապետական նշանակության ընտրական միջոցառումն է և այն անցկացվում է 2020թ. հունվարի 1-ին գործողության մեջ դրված Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքի հիման վրա:

Ընդհանուր առմամբ, Արցախի Հանրապետությունում սկսած 1991թ.-ից կազմակերպվել են համապետական նշանակության 3 հանրաքվեներ, Հանրապետության Նախագահի` 5 և Խորհրդարանական 6 ընտրություններ, տեղական հանրաքվեներ ու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ:

➤ Տարիների հետ միջազգային հետաքրքրվածությունը Արցախի Հանրապետության հանդեպ ավելացել է: Օրինակ, եթե 1991թ. անկախության հանրաքվեին մասնակցում էր ընդամենը 40 դիտորդ, ապա արցախյան վերջին համապետական ընտրական միջոցառմանը` Սահմանադրության նախագծի ընդունման հանրաքվեին մասնակցել են 30-ից ավելի երկրներից 104 միջազգային դիտորդներ, 103 տեղական դիտորդներ, ՋԼՄ-րի 80-ից ավելի ներկայացուցիչներ, իսկ վերջին` 2019թ. սեպտեմբերի 8-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին` առաջին անգամը տեղական նշանակության ընտրությունների արցախյան պրակտիկայում` 324 դիտորդներ:

➤ Միաժամանակ տեղին է նկատել, որ Արցախի Հանրապետությունում ընտրություններն ու հանրաքվեները, որպես կանոն, միշտ էլ աչքի են ընկնում քաղաքացիների ակտիվ մասնակցությամբ: Օրինակ, 1991թ. ԼՂՀ անկախության հանրաքվեին մասնակցել է ընտրողների

82,2 տոկոսը, 2006թ. ԼՂՀ Սահմանադրության հանրաքվեին՝ 87,2 տոկոսը: Համապետական ընտրություններին ընտրողների **մասնակցության միջին ցուցանիշը 65-70 տոկոս է:**

➤ Ընտրությունների և հանրաքվեների կազմակերպման տեսանկյունից ընտրական հանձնաժողովների համար կարևորվում է ինչպես ձգտումը՝ Արցախում անցկացնել միջազգային չափանիշներին համապատասխանող ընտրություններ և հանրաքվեներ, այնպես էլ դրա համար հիմք հանդիսացող իրավական դաշտի անընդհատ կատարելագործումը:

➤ Հաշվի առնելով ընտրական համակարգում 1991 թվականից կուտակված փորձը, համապետական նշանակության ընտրություններ և հանրաքվեներ կազմակերպելու գործում միջազգային դիտորդների կողմից ներկայացրած առաջարկություններն ու եզրակացությունները, ընտրական օրենսդրության կատարելագործմանը զուգընթաց վերջին տարիների բարեփոխումները՝ արդի տեխնոլոգիաներ ներդնելու, ընտրական վարչարարության մարմինների որակավորման բարձրացման ուղղությամբ, կարելի է փաստել, որ Արցախի Հանրապետությունում անցկացվող յուրաքանչյուր ընտրություն և հանրաքվե նախորդի համեմատ առավել դրական տեսք է ունենում: Դրան են ձգտում և ընտրական հանձնաժողովները, և պետական իշխանության այլ մարմինները, իսկ ամենակարևորը՝ Արցախի Հանրապետության ընտրողները:

➤ **2020թ. հունվարի 1-ի դրությամբ**, Արցախի Հանրապետության **ընտրողների թիվը 103 385 է:** Ընտրություններն անցկացվում են հանրապետության ողջ տարածքում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից մշակվել և ընդունվել են ընտրական նոր օրենսգրքից բխող շուրջ 6 տասնյակ իրավական ակտեր, հաստատվել է ընտրությունների կազմակերպման և անցկացման թվով 84 հիմնական միջոցառումների ժամանակացույց՝ ընտրությունների մասնակիցների անելիքների հստակ շարադրմամբ:

➤ Արցախի Հանրապետության ժողովուրդն իր իշխանությունների միջոցով մշտապես ողջունում և իր երախտագիտությունն է հայտնում դիտորդներին՝ Արցախի Հանրապետության ընտրական և հանրաքվեների գործընթացների նկատմամբ նրանց հետաքրքրվածության ու մշտական ուշադրության համար, և հստակ համոզմունք ունի, որ այն շարունակական է լինելու:

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Դիտորդական առաքելության նպատակն ընտրական գործընթացների վերաբերյալ հավաստի տեղեկությունների հավաքումն է և դրանց հիման վրա անկախ եզրակացության կազմումը:

Դիտորդական առաքելությունն իրականացվում է դիտորդների միջոցով՝ պահպանելով չեզոքության, անկողմնակալության և ընտրական գործընթացներին չմիջամտելու սկզբունքները:

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՄԸ

Ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն՝

- 1) միջազգային կազմակերպությունները.
- 2) օտարերկրյա պետությունների ներկայացուցիչները.

3) Արցախի Հանրապետության և օտարերկրյա հասարակական այն կազմակերպությունները, որոնց կանոնադրական խնդիրները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում Հանրապետության նախագահի թեկնածուներին, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին):

Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելությունների կազմում որպես դիտորդ Արցախի Հանրապետության քաղաքացիներ ընդգրկվել ՉԵՆ ԿԱՐՈՂ:

Միջազգային կազմակերպությունները, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչները և օտարերկրյա հասարակական կազմակերպությունները դիտորդական առաքելություն կարող են իրականացնել **ՀՐԱՎԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ**՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո:

Նշված կազմակերպություններին և անձանց դիտորդական առաքելություն իրականացնելու հրավեր ուղարկելու իրավունք ունեն՝

- ✓ Արցախի Հանրապետության Նախագահը.
- ✓ Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահը.

✓ Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելությունների՝ ընտրությունների վերաբերյալ զեկույցները տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում (www.cecncr.am):

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԴԻՏՈՐՂՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ

Դիտորդներն իրենց առաքելությունն իրականացնում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո:

Դիտորդների հավատարմագրման կարգը, հավատարմագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, դիտորդների վկայականի ձևերը սահմանված են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2020 թ. հունվարի 16-ի N 21-Ն որոշմամբ:

Հավատարմագրվելու կամ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու համար դիմումները Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվում **ընտրությունները նշանակելու օրվանից հետո, բայց քվերակության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ:**

Հավատարմագրվելու դիմումը պետք է պարունակի դիմողի անվանումը, ծանուցման հասցեն, հեռախոսահամարը, նշում՝ ընտրության անվանման և օրվա մասին, կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դիմումի տրման ամսաթիվը, դիմողի ստորագրությունը:

Հավատարմագրվելու համար դիմումին կից ներկայացվում է.

1) հասարակական կազմակերպության կանոնադրության պատճենը,

2) հրավերի պատճենը՝ միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա հասարակական կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչների դեպքում,

3) հավատարմագրման ներկայացվող դիտորդների ցուցակը՝ նաև էլեկտրոնային կրիչով՝ Microsoft Excel տարբերակով: Ցուցակի էլեկտրոնային տարբերակը ներբեռնվում է Կենտրոնական ընտրական

հանձնաժողովի համացանցային կայքից և լրացվում այդ տարբերակում նշված եղանակով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններին համապատասխան վկայականներ է տրամադրում դիմումն ստանալուց հետո՝ **7 ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ**:

Տեղական դիտորդների դեպքում համապատասխան կազմակերպությանը տրվում է իր կողմից ներկայացված ցուցակում ընդգրկված դիտորդների թվին համապատասխան քանակի վկայականներ, որոնցում լրացվում է համապատասխան կազմակերպության անվանումը:

Դիտորդի վկայականում դիտորդի ազգանունը, անունը, հայրանունը լրացվում է համապատասխան կազմակերպության կողմից և տրամադրվում է դիտորդին:

Վկայականը կարող է կնքվել նաև դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության կմիջով:

Դիտորդների լիազորությունները դադարում են ընտրությունների արդյունքների պաշտոնական **ՀՐԱՊԱՐԱՎՈՒՄԻՑ ՀԵՏՈ՝ 8-ՐԴ ՕՐԸ**, եթե ընտրության արդյունքները դատարան չեն բողոքարկվել: Ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկվելու դեպքում դիտորդների լիազորություններն ավարտվում են դատական ակտի հրապարակման օրվա հաջորդ օրը, եթե վերաքվեարկություն, ինչպես նաև Հանրապետության նախագահի ընտրության 2-րդ փուլ չեն նշանակվել: Վերաքվեարկություն, ինչպես նաև Հանրապետության նախագահի ընտրության 2-րդ փուլի դեպքերում դիտորդների կրկին հավատարմագրում **ՉԻ ՊԱՅԱՆՋՎՈՒՄ**:

ԴԻՏՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Դիտորդն իրավունք ունի՝

- **ներկա լինել ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում:**

Ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում),

կարող են ներկա լինել յուրաքանչյուր միջազգային կազմակերպությունից մինչև **ԵՐԿՈՒ ԴԻՏՈՐԴ**՝ թարգմանչի ուղեկցությամբ, իսկ տեղական դիտորդների դեպքում՝ յուրաքանչյուր կազմակերպությունից՝ **ՍԵԿ ԴԻՏՈՐԴ**:

Դիտորդը ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում), կարող է ներկա լինել, եթե ունի սահմանված մնուշի վկայական:

Հանձնաժողովի նախագահին **ԱՐԳԵԼՈՒՄ Է** ընտրական հանձնաժողովներում, իսկ քվեարկության ընթացքում նաև քվեարկության սենյակում ներկա լինելու այն անձանց, ովքեր չունեն համապատասխան իրավունք:

! Դիտորդի վկայականն ուժի մեջ է անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում:

! Դիտորդը պարտավոր է դիտորդի իր վկայականը տեսանելի ձևով կրել վերնազգեստի վրա:

Հանձնաժողովի նախագահը դուրս է հրավիրում նաև այն անձանց, ովքեր վերնազգեստի վրա տեսանելի ձևով չեն կրում համապատասխան վկայական:

Ընտրական հանձնաժողովի նիստերին դիտորդի ներկայությունը արձանագրվում է ընտրական հանձնաժողովի կողմից:

Քվեարկության օրը տեղամասային կենտրոն (քվեարկության սենյակ) դիտորդի այցելության դեպքում համապատասխան գրառում է կատարվում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում (նշվում է կազմակերպության անվանումը, դիտորդի անունը, ազգանունը և տեղամաս մուտք գործելու և տեղամասից հեռանալու ժամը):

Դիտորդն իրավունք ունի՝

- **հետևելու քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման և հաշվարկման գործընթացներին:**

Դիտորդները կարող են տպագրության ողջ ընթացքում տպագրատանը հետևել քվեաթերթիկների տպագրմանը, իրենց միջոցներով ուղեկցել քվեաթերթիկները տպագրատնից տարածքային ընտրական հանձնաժողով, քվեարկության նախորդ օրը՝ տարածքային ընտրական հանձնաժողովից տեղամասային ընտրական հանձնաժողով, իսկ քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո՝ ընտրական փաստաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովից տարածքային ընտրական հանձնաժողով տեղափոխող մեքենան:

Դիտորդները կարող են քվեարկության նախորդ օրը տարածքային ընտրական հանձնաժողովում հետևել քվեաթերթիկները տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացնելու գործընթացին, դրանց պահպանմանը, քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովում չմիջամտելով հանձնաժողովի աշխատանքներին, հետևել քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին:

Դիտորդն իրավունք ունի՝

- **ծանոթանալու Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, տարածքային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին և ինքնուրույն կատարելու քաղվածքներ, ստանալու պատճեններ այն փաստաթղթերից, որոնք տեղադրված չեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:**

Դիտորդն իրավունք ունի՝

- **տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, ծանոթանալու տեղամասային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին (բացառությամբ քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների), դատարանի համապատասխան վճիռներին, ընտրողին տրամադրած լիազորմարմնի համապատասխան տեղեկանքին: Չմիջամտելով ընտ-**

րական հանձնաժողովի աշխատանքներին և չխաթարելով քվեարկության ընթացքը՝ ինքնուրույն կատարելու քաղվածքներ և նշումներ ընտրական փաստաթղթերից (բացառությամբ ընտրողների ստորագրած ցուցակների):

! Քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներից քաղվածքներ և նշումներ կատարելն արգելվում է:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության արդյունքների ամփոփման, իսկ տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության արդյունքների վերահաշվարկի գործընթացը կազմակերպում են այնպես, որ դիտորդները հնարավորություն ունենան հետևել քվեաթերթիկների վավերականության որոշման, քվեաթերթիկների տեսակավորման, քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին:

Դիտորդը կարող է լուսանկարահանել, տեսանկարահանել ընտրական հանձնաժողովների նիստերը, ինչպես նաև քվեարկության ընթացքը, քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը և քվեարկության արդյունքների վերահաշվարկի աշխատանքները՝ չխախտելով ընտրողների քվեարկության գաղտնիության իրավունքը:

Դիտորդի պահանջով նրանց տրվում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով:

Դիտորդն իրավունք ունի՝

- **բողոքարկել ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը), եթե գտնում է, որ խախտվել են դիտորդի Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքները:**

Ընտրական հանձնաժողովներ ներկայացված դիմումը պետք է ստորագրված լինի, ներառի դիմողի անունը, ազգանունը, հասցեն,

տրման ամսաթիվը (կարող է ներառել նաև դիմումատուի հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն): Դիմումում պետք է սահմանված լինի դիմումատուի պահանջը, բերված լինեն դիմումատուի հիմնավորումները, իսկ հնարավոր ապացույցները պետք է կցված լինեն դիմումին:

Եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր:

Դիտորդի կողմից ներկայացված դիմումներին կից պետք է ներկայացվի դիտորդի կարգավիճակը հավաստող փաստաթղթի (սահմանված մոլշի վկայականի) պատճենը:

Դիտորդն իրավունք ունի՝

- **ազատ տեղաշարժվելու քվեարկության սենյակում՝ քվեաթերթիկների, ընտրողների ցուցակների ու քվեատուփի դիտարկման համար:**

Դիտորդն իրավունք ունի՝

- **հրապարակայնորեն, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով հայտնելու կարծիք, անելու հայտարարություն՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման վերաբերյալ:**

Դիտորդի Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում, բացառությամբ հետևյալ դեպքերի՝

1. Դիտորդը կարող է հեռացվել ընտրական հանձնաժողովի միստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից երբ՝

- ✓ դիտորդն աջակցում է որևէ թեկնածուի, ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության.
- ✓ խախտում է Ընտրական օրենսգրքի պահանջներն այն եղանակով, որն էապես խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը:

Դիտորդին ընտրական հանձնաժողովի միստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից՝ հեռացնելու մասին որոշումն ընդուն-

վում է ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով:

2. Եթե քվեարկության սենյակում գտնվող դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարում է քվեարկության բնականոն ընթացքը, ապա տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավասու է սահմանելու քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվը:

Որոշումն ընդունվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով:

Որոշումը պետք է համապատասխանի համաչափության սկզբունքին, և ամեն դեպքում այդ որոշմամբ սահմանված թիվը չի կարող նվազ լինել 15-ից:

Այդ սահմանափակումը չի տարածվում՝

- ✓ միջազգային դիտորդների,
- ✓ վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստառադիոընկերությունների ներկայացուցիչների վրա:

Դիտորդին տեղամասային կենտրոնից կամ ընտրական հանձնաժողովի նիստերից դուրս իրավիճակում դեպքում ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում կատարվում է համապատասխան գրառում՝ նշելով պատճառները:

Դիտորդն իրավունք չունի՝

- միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին.
- միջամտելու ընտրական հանձնաժողովի կողմից որոշումների ընդունմանը.
- միջամտելու քվեարկության ընթացքին.
- իրականացնելու քարոզչություն.
- ընտրական հանձնաժողովի անդամներին տալու ցուցումներ, ներկայացնելու պահանջներ.
- կատարել միջազգային իրավունքի նորմերին հակասող կամ Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքով չսահմանված գործառույթներ:

Դիտորդը պարտավոր է՝

- իր իրավունքներն իրականացնելիս լինել անկողմնակալ, չեզոք, հրապարակայնորեն որևէ կանխակալ դիրքորոշում չարտահայտել կամ նախապատվելի վերաբերմունք չդրսևորել իշխանության կամ ընդդիմության, թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) հետ կապված որևէ հարցի նկատմամբ: Դիտորդներն իրենց անձնական դիտարկումները կարող են ներկայացնել ընտրական հանձնաժողովներին դիտորդական առաքելության զեկույցի միջոցով:

Դիտորդների բոլոր եզրահանգումների համար պետք է հիմք հանդիսանան իրենց անձնական դիտարկումները.

- գրանցվել ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում ընտրական հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև քվեարկության ընթացքում՝ քվեարկության սենյակում ներկա գտնվելու համար.
- պահպանել Ընտրական օրենսգրքի պահանջները:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունները քվեարկության նախորդ օրը

Տեղամասային ընտրական հանձնաժողովը վիճակահանությանը որոշում է քվեաթերթիկներն ստորագրող հանձնաժողովի 3-ական անդամների, ովքեր պարտավոր են այդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն, ստորագրել բոլոր քվեաթերթիկների հակառակ կողմում:

! Քվեաթերթիկներն ստորագրելու ընթացքում հանձնաժողովի անդամը ստորագրման իր ընտրած տարբերակը փոխել չի կարող:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունները քվեարկության օրը

Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը տեղամասային կենտրոնում սկսվում է ժամը 7.00-ին:

Հանձնաժողովն իր նիստում վիճակահանությամբ որոշում է հանձնաժողովի անդամների միջև աշխատանքային պարտականությունների բաշխումը:

Մինչև տեղամասային կենտրոնի բացումը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկությանը ներկա լինելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ.

- ✓ բացում է չիրկիզվող պահարանը,
- ✓ հանում է քվեաթերթիկները, ընտրողների ցուցակները, կնիքը և գրանցամատյանում կնիք դնելով՝ հայտարարում է կնիքի համարը,
- ✓ ստուգում է քվեատուփի դատարկ լինելը, փակում և կնքում է քվեատուփը (անհրաժեշտության դեպքում նաև՝ շրջիկ արկղը),
- ✓ ընտրողների ցուցակները հանձնում է ընտրողների գրանցման համար պատասխանատու անդամներին, քվեաթերթիկները հարյուրական փաթեթով հատկացնում է քվեաթերթիկներ հատկացնող անդամներին, կնիքը և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները՝ քվեաթերթիկների կնքման համար պատասխանատու անդամին:

Վերոհիշյալ բոլոր գործողությունների մասին տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում կատարվում են համապատասխան գրառումներ:

Ժամը 8:00-ին ընտրական տեղամասը հայտարարվում է բացված և թույլատրվում է ընտրողների մուտքը քվեարկության սենյակ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Ընտրողների գրանցումը

Քվեարկությանը ներկայացած յուրաքանչյուր ընտրող պետք է գրանցվի հանձնաժողովի գրանցման համար պատասխանատու անդամի մոտ գտնվող ընտրողների ցուցակում՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ: Առանց սահմանված կարգով գրանցվելու՝ ընտրողը չի կարող քվեաթերթիկ ստանալ և քվեարկել:

Եթե ընտրողը չի կարող ինքնուրույն ստորագրել ընտրողների ցու-

ցակում, ապա նա իրավունք ունի դիմելու այլ քաղաքացու օգնության, բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամների և վստահված անձանց:

Ընտրողի համար անձը հաստատող փաստաթուղթ են համարվում՝

✓ անձնագիրը (այդ թվում՝ նաև նույնականացման քարտը և կենսաչափական անձնագիրը),

✓ անձնագրին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթ՝ տրված լիազոր մարմնի կողմից,

✓ զինծառայողների համար՝ զինվորական վկայականը կամ զինվորական գրքույկը, եթե գրանցվում են (քվեարկում են) զինվորական մասի կազմած ընտրողների ցուցակում:

2. Քվեաթերթիկ ստանալը

Գրանցվելուց անմիջապես հետո ընտրողը մոտենում է հանձնաժողովի՝ քվեաթերթիկների տրամադրման համար պատասխանատու անդամին, որը քվեաթերթիկը (քվեաթերթիկները՝ միաժամանակ մի քանի քվեարկություն անցկացվելու դեպքում) հանձնում է ընտրողին:

3. Քվեաթերթիկը կնքելը

Քվեաթերթիկը կնքող հանձնաժողովի անդամը կարող է համոզվել ընտրողի՝ տվյալ ընտրական տեղամասում հաշվառված լինելու մեջ և կնքում է քվեաթերթիկները:

4. Քվեարկությունը

Ստանալով քվեաթերթիկները՝ ընտրողն անցնում է քվեարկության խցիկ՝ քվեարկելու:

! Ընտրողը քվեաթերթիկը լրացնում է գաղտնի՝ քվեարկության խցիկում: Արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե ընտրողն ինչպես է քվեարկում:

Քվեարկության օրը տեղամասային կենտրոնում հերթի առկայության դեպքում քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողը հրավիրվում է քվեարկության սենյակ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից արտահերթ ռեժիմով:

Տեսողության պատճառով քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողին թույլատրվում է ընտրողների ցուցակում

ստորագրելու համար օգտագործել իր անձնական ֆաքսիմելային ստորագրությունը:

Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ, դիտորդ, գանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ:

! Անձն իրավունք ունի օգնելու քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող միայն մեկ ընտրողի:

Եթե ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել կամ վնասել է, ապա կարող է դիմել հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար:

Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ընտրողին հատկացվում է նոր քվեաթերթիկ, ընտրողների ցուցակում կատարվում է համապատասխան նշում տվյալ ընտրողի անվան, ազգանվան դիմաց: Սխալ լրացված (վնասված) քվեաթերթիկն անհապաղ մարվում է:

Ընտրողը մոտենում է քվեատուփի համար պատասխանատու անդամին, որը ընտրողին հնարավորություն է ընձեռում քվեաթերթիկը զցելու քվեատուփի մեջ:

Ընտրողն իրավունք չունի տեղամասային կենտրոնում հայտարարելու, թե ինչպես է քվեարկել:

Քվեարկելուց հետո ընտրողն անհապաղ պետք է դուրս գա տեղամասային կենտրոնից:

Տեղամասային կենտրոնի փակումը

Ժամը 20:00-ին տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեարկության ավարտի մասին և

- ✓ արգելում է ընտրողների մուտքը քվեարկության սենյակ.
- ✓ քվեարկության սենյակում գտնվող ընտրողներին քվեարկելու հնարավորություն է տալիս.

- ✓ փակում է քվեատուփի ճեղքը.
- ✓ փակում է տեղամասային կենտրոնը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Քվեարկության արդյունքների ամփոփումը կատարվում է քվեարկության սենյակում: Քվեարկության արդյունքների ամփոփումն սկսվում է անմիջապես քվեարկության ավարտից հետո և ընթանում առանց ընդհատման մինչև քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ արձանագրության կազմումը:

Քվեարկության արդյունքների ամփոփման փուլում կատարվում են հետևյալ գործողությունները՝

1. հաշվարկվում է չօգտագործված, ընտրողների կողմից ոչ ճիշտ լրացված (վնասված) և հետ տրված քվեաթերթիկների ընդհանուր թիվը.

2. հաշվարկվում է ընտրողների յուրաքանչյուր լրացուցիչ ցուցակի (այդ թվում՝ քվեարկության օրն ընտրական տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակի) ընտրողների թիվը՝ առանձին-առանձին, ստացվում է ընտրական տեղամասում ընտրողների ընդհանուր թիվը.

3. հաշվարկվում և արձանագրվում է քվեարկության մասնակիցների թիվը ընտրողների ցուցակներում (այդ թվում՝ լրացուցիչ ցուցակներում)՝ ընտրողների ստորագրությունների հիման վրա.

4. տեսակավորվում են քվեաթերթիկները.

Հանձնաժողովի նախագահը սկզբում բացում է Հանրապետության նախագահի ընտրությունների քվեաթերթիկների համար նախատեսված քվեատուփը, այնուհետև՝ Ազգային ժողովի ընտրությունների քվեաթերթիկների համար նախատեսված քվեատուփը: Քվեատուփից հանում է մեկ քվեաթերթիկ: Հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեաթերթիկի վավեր, անվավեր կամ չսահմանված մուշի լինելու մասին, վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում նաև, թե ինչպես է քվեարկված, ապա ցուցադրում այնպես, որ այն տեսանելի լինի ներկայների համար: Պահանջի դեպքում քվեաթերթիկը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին: Հանձնաժողովի նախագահի հայտարարությանը համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն: Առարկության դեպքում քվեարկության

արդյունքով (քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը, և եթե հանձնաժողովի անդամի առաջարկությունը քվեարկությամբ չի ընդունվում, ապա ընդունված է համարվում հանձնաժողովի նախագահի առաջարկությունը), իսկ առարկություն չլինելու դեպքում հանձնաժողովի նախագահը, իր հայտարարության համաձայն, ըստ քվեաթերթիկում կատարված քվեարկության նշումի, քվեաթերթիկը դնում է համապատասխան թեկնածուի, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցած կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին, մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ, որից հետո քվեատուփից հանում է հաջորդ քվեաթերթիկը:

Այդ գործողությունը կրկնվում է քվեատուփում առկա բոլոր քվեաթերթիկների համար:

Քվեաթերթիկների վավերականությունը

Սահմանված մոուշի քվեաթերթիկն անվավեր է, եթե՝

- ✓ մեկից ավելի թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին նշումներ է ներառում.
- ✓ մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում միաժամանակ «կողմ եմ» և «դեմ եմ» բառերի դիմաց նշումներ է ներառում.
- ✓ որևէ նշում չի ներառում.
- ✓ բացի քվեարկության համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կամ դրան մանվող նշանից՝ ներառում է այլ նշում.
- ✓ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի կողմից ստորագրված կամ կնքված չէ.
- ✓ ակնհայտ խախտված է քվեաթերթիկում նշում կատարելու սահմանված ձևը:

Սահմանված ձևի ոչ էական խախտումը չի կարող համարվել քվեաթերթիկի անվավերության հիմք, եթե ընտրողի մտադրությունը հստակ է և աներկբա:

Տեսակավորման ողջ ընթացքում հանձնաժողովի անդամներին արգելվում է նշումներ կատարել, ինչպես նաև իրենց մոտ ունենալ գրիչներ, մատիտներ և նշումներ կատարելու այլ առարկաներ:

5. հաշվարկվում և հրապարակվում են.

- յուրաքանչյուր թեկնածուին, կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը,
 - մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ թեկնածուին կողմ կան դեմ քվեարկված քվեաթերթիկների թիվը,
 - անվավեր քվեաթերթիկների թիվը:
- Հաշվարկված թվերը հրապարակվում են և արձանագրվում գրանցամատյանում:

Հիմք ընդունելով կատարված հաշվարկները և գրանցամատյանում արձանագրված տվյալները տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմում է տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն: Արձանագրության կազմումը հանձնաժողովը պետք է ավարտի քվեարկության ավարտից **ոչ ուշ, քան 10 ժամ** հետո:

Քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան **12 ժամվա** ընթացքում, տարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացվում.

✓ ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթները (կամ մեկանգամյա օգտագործման պարկերը).

✓ ընտրողների ցուցակները (բացառությամբ զորամասում և քրեակատարողական հիմնարկում կազմվող՝ ընտրողների ստորագրված ցուցակների) պարունակող փոքր պարկը.

✓ յուրաքանչյուր ընտրության քվեարկության արդյունքների արձանագրության 2 օրինակը.

✓ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը.

✓ տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը.

✓ քվեատուփը /քվեատուփերը, շրջիկ արկղը/.

✓ քվեարկության խցիկները:

Ընտրական փաստաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը տարածքային ընտրական հանձնաժողով են տեղափոխում հնարավորության դեպքում ոստիկանության ծառայողների ուղեկցությամբ:

Ընտրական փաստաթղթերը տարածքային ընտրական հանձնաժողովում հանձնվում և ընդունվում են հանձնողի ու ընդունողի կողմից ստորագրելու և ստացական տալու միջոցով:

Տարածքային ընտրական հանձնաժողովի գործողությունները տեղամասային ընտրական հանձնաժողովների արձանագրությունները ստանալուց հետո

Տարածքային ընտրական հանձնաժողովում ստուգվում է ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների կազմման վավերականությունը, իսկ թվաքանակային սխալների առկայության դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը վերացնում են այդ սխալները՝ ուղղումները վավերացնելով իրենց ստորագրություններով:

! Ելակետային տվյալների փոփոխություն չի կատարվում: Ելակետային են տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից հատ-հատ հաշվելու միջոցով ստացված տվյալները:

Տարածքային ընտրական հանձնաժողովում նշում է կատարվում տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության ընդունման ամսաթվի և ժամանակի մասին, ինչը վավերացվում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ և հանձնաժողովի կնիքով:

Տարածքային ընտրական հանձնաժողովը համեմատում է տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքի համարը տեղամասային ընտրական հանձնաժողովի արձանագրության կնիքի համարի հետ:

Տարածքային ընտրական հանձնաժողովն ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության տվյալները պարբերաբար, **բայց ոչ ուշ, քան 3 ժամը մեկ** աղյուսակավորում է ըստ ընտրական տեղամասերի:

Տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալների աղյուսակավորումն ավարտվում է քվեարկության ավարտից հետո՝ **ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում:**

Տարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորման օրինակը՝ վավերացված տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի ստորագրություններով և հանձ-

նաժողովի կնիքով, անհապաղ փակցվում է տարածքային ընտրական հանձնաժողովում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

Տարածքային ընտրական հանձնաժողովն ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության մեկ օրինակը քվեարկության ավարտից ոչ ուշ, քան **24 ժԱՄՎԱ** ընթացքում ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Տարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության հաջորդ օրը՝ **ժամը 12:00-ից սկսած**, իրականացնում է ընտրական տեղամասերից ստացված՝ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների սկանավորում, որին կարող են հետևել ընտրական հանձնաժողովների անդամները, թեկնածուները, վստահված անձինք, դիտորդները և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները: Քվեարկությանը մասնակցած ընտրողների սկանավորված ցուցակները փակցվում են տարածքային ընտրական հանձնաժողովում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, տարածքային ընտրական հանձնաժողովներից ստացված՝ ընտրական տեղամասերում քվեարկությունների արդյունքների հիման վրա, քվեարկության ավարտից ոչ ուշ, քան **24 ժԱՄ ԴԵՏՈ**, ամփոփում է համապետական ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները, արձանագրությամբ վավերացնում ու Արցախի հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով պաշտոնապես հրապարակում դրանք:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 72 ժամվա ընթացքում, իսկ քվեարկության արդյունքների հետ կապված բողոք լինելու դեպքում քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով ընտրական տեղամասերում քվեարկությունների արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, վերահաշվարկի արդյունքները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, կազմում է արձանագրություն՝ քվեարկության արդյունքների վերաբերյալ:

Ի գիտություն

Համաձայն Արցախի Հանրապետության սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մասի՝ եթե քվեարկվել է 2-ից ավելի թեկնածու և նրանցից ոչ մեկին կողմ չի քվեարկել թեկնածուներին կողմ քվեարկած ընտրողների թվի կեսից ավելին, ապա **քվեարկությունից հետո՝ 14-րդ օրը**, անցկացվում է Հանրապետության նախագահի ընտրության **2-րդ փուլի քվեարկություն**: Հանրապետության նախագահի ընտրության 2-րդ փուլին կարող են մասնակցել այն երկու թեկնածուները, որոնց կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ:

Հանրապետության նախագահի ընտրության 2-րդ փուլի նախընտրական քարոզչությունն սկսվում է ընտրության 2-րդ փուլ անցկացնելու մասին որոշման կայացումից հետո՝ 2-րդ օրվանից:

* * *

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորմատիվ և անհատական որոշումները տեղադրված են կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում www.cecncr.am:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ՀԱՄԱՌՈՏ	3
2. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ	5
3. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ	5
4. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ	6
5. ԴԻՏՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ	7
6. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ	13
7. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ	14
8. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ	17
9. ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ	21

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84¹/₁₆,
ծավալը՝ 1.5 տպ. մամուլ, տպաքանակը՝ 100:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Յ.Յակոբյան, 25
Ստեփանակերտ-2020